

# ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առթիվ

Հարգարժան կանայք,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Կանանց տոնի կապակցությամբ:

Տոն, որը մեր հոգին լցնում է ջերմությամբ և ընդգծում ձեր բացառիկ դերն ու նշանակությունը մեր կյանքում:

Դուք եղել և մնում եք հայ օջախի անմար լույսը, ապավենն ու հիմնասյունը՝ պահելով ու պահպանելով ընտանեկան երջանկության ու բարության մթնոլորտը, ձեր ուսերին կրելով սերունդ ունենալու և դաստիարակելու աստվածաշնորհ առաքելությունը:

Նշանակալի է նաև ձեր ավանդը մեր պետականության կայացման, մեր պետության առաջընթացի ու զարգացման գործում, ձեր մասնակցությունը՝ հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր բնագավառներում:

Ձեր ոգեշնչող ներկայությամբ և առանձնահատուկ դերակատարմամբ դուք հարստացնում եք մեր կյանքը, ավելացնում հավաստի ու վստահությունը ապագայի հանդեպ:

Մի րեղի կանայք,

Կրկին շնորհավորելով ձեզ զարնանային այս հիասքանչ տոնի առթիվ՝ մաղթում եմ անսահման երջանկություն, չխամրող կանացիություն և տոնական բարձր տրամադրություն: Թող ձեր ընտանիքներում և սրտերում միշտ իշխեն սերն ու ներդաշնակությունը:

Ամենայն բարիք ձեզ:

**ՀՀ Արմավիրի մարզպետ՝  
Աշոտ Ղահրամանյան**